***ՎԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ.*, Հայաստանի Առաջին հանրապետության միլիցիան և Ներքին գործերի նախարարությունը (1918–1920 թթ.),** «Ասողիկ» հրատ. Ե., 2003, 150 էջ:

Հրապարակի վրա է պատմագիտության թեկնածու Վանիկ Վիրաբյանի «Հայաստանի Առաջին հանրապետության միլիցիան և Ներքին գործերի նախարարությունը (1918-1920 թթ.)» ուշագրավ աշխատությունը: Առաջին անգամ պատմագիտության մեջ, օգտագործելով նորահայտ արխիվային բազմաթիվ վավերագրեր և այլ նյութեր, հեղինակը քննել է բոլորովին չուսումնասիրված մի հիմնախնդիր՝ նվիրված Հայաստանի Առաջին հանրապետության ուժային կառույցներից մեկի՝ միլիցիայի և Ներքին գործերի նախարարության (ՆԳՆ) պատմությանը: Անշուշտ, Վ. Վիրաբյանը ամենևին էլ նպատակ չի ունեցել անդրադառնալ հարցի բոլոր նրբերանգներին, որոնք շատ են, այլ ընտրել է մի շարք կարևոր հիմնախնդիրներ:

Աշխատության առաջաբանում Վ. Վիրաբյանը, հիմնավորելով թեմայի ուսումնասիրության անհրաժեշտությունը, հատուկ նշում է, որ դա բխում է ներկա ժամանակաշրջանի գործընթացների զարգացման ներքին խորքային բովանդակությունից, երբ չարդարացված անցումներ են կատարվել ու կատարվում են, ասենք, օրինակ, Ազգային անվտանգության նախարարությունից դեպի Ազգային անվտանգության ծառայություն և Ներքին գործերի նախարարությունից դեպի Հայաստանի ոստիկանություն կառույցներ՝ գտնելով, որ դա, իհարկե, ընդամենը բառակապակցությունների փոփոխություն չէ, այլ խորքային «որակական» անցում՝ վերից վար սկզբունքով, ասենք, ինչպես դա կարող է լինել միութենական կամ անկախ հանրապետության կարգավիճակից դեպի ինքնավար հանրապետության կամ մարզի կարգավիճակին (էջ 3-5):

Հեղինակն իրավացի է, երբ մենագրության մեջ ընդգծում է այն միտքը, որ «Միլիցիայի և Ներքին գործերի մարմինների ստեղծման և ուղղորդման ուղղությամբ կառավարության կողմից 1918-20 թթ. ձեռնարկված ամեն մի քայլ (և՛ հաջողված, և՛ ձախողված) արժանի է ուշադրության, քանզի դա միանգամայն ուսանելի է այսօրվա պետաքաղաքական գործընթացների կազմակերպման տեսանկյունից» (էջ 36), և դա հիմնավորելու համար Վ. Վիրաբյանը ընդգծում է. «1918-1920 թթ. սոցիալ-տնտեսական փլուզման, սովի ու գաղթականների սովալլուկ զանգվածների առկայության պայմաններում (հացի կարոտ, սովից մեռնող մարդիկ մի բևեռում, իսկ մյուսում՝ բախտախնդիր մաուզերիստների ու բյուրոկրատ չինովնիկների ոչ ստվար, բայց «գայլացող» բանակը իր անգլիացի, ֆրանսիացի և այլ բարեկամներով շրջապատված, նրանց հրամանների հլու կամակատար, ինչ-որ մի օտարերկրացի՝ երկրի մարդկանց հոգով ու սրտով անհաղորդ լեյտենանտի կամ գեներալի կամքը կատարող, որի պայմաններում սեփական դիմագիծ և ոճ ունեցող միլիցիա կամ այլ կառույց ունենալը դժվարագույն խնդիր էր, ինչպես 1918 թ., այնպես էլ այսօր - Վ. Վ.) միջոցներ գտնելն ինչ-որ տեղ շատ դժվար էր, երբեմն էլ պարզապես անհնարին, սակայն պատվաբեր, նամանավանդ որ ամեն մի երկրում էլ միլիցիան (ոստիկանություն, ժանդարմերիա և այլն) մնում է որպես այդ պետության «աքիլլեսյան գարշապարը» (էջ 36-37):

Վ. Վիրաբյանի կողմից գիտական շրջանառության մեջ դրված արխիվային և այլ փաստաթղթերը անհերքելիորեն ցույց են տալիս այն իրական վիճակը, որն այդ ժամանակաշրջանում իշխում էր միլիցիայի և ՆԳՆ համակարգում: Աշխատության առաջին գլխում պատմաբանը հարուստ փաստերով վերհանում է միլիցիայի և Ներքին

գործերի նախարարության ստեղծման ուղղությամբ գործադրած ՀՀ կառավարության ջանքերը, հատկապես ֆինանսական միջոցների կարևորության հարցում, որ նորաստեղծ պետության դեռևս երիտասարդ, չթրծված կառավարությունը փորձում էր լուծել՝ պետական գանձարանի շատ համեստ միջոցներից մաս հատկացնելով միլիցիաստեղծ գործընթացների կազմակերպման համար (էջ 6-41):

Հեղինակը բացահայտում է նաև այն դժվարությունները և բացթողումները, որ կուտակվել էին այդ բնագավառում, հենց իրենց՝ պետական իշխանության այդ մարմինների բազմաթիվ սխալները, թերացումները և սայթաքումները: Հեղինակը արդարացիորեն նշում է, որ ինչպես այսօր, այնպես էլ առավելապես այդ ժամանակաշրջանում, ինչքան էլ ՀՀ կառավարությունը և պետությունը փորձեին, միևնույն է՝ միլիցիան և ՆԳՆ-ն կաղում էին, որովհետև դրանցում շատ էր հանցավորության շերտանստվածքը, քանզի շատ անմխիթար էին նաև կադրային ներուժը, այն կարողությունները, որոնց միջոցով հնարավոր կլիներ օրինաստեղծ և օրինապահ, արդարամիտ և պետականամետ միլիցիա և ՆԳՆ ստեղծել: Հետևաբար, ամեն ինչ չէ, որ պետք է բացատրել ժամանակաշրջանի, աշխարհաքաղաքական իրավիճակի բարդությամբ, թշնամական ուժերով և պետություններով շրջապատված լինելու հանգամանքով (էջ 45-98):

Վ. Վիրաբյանը կարևորում է այն միտքը, որ հենց միլիցիայի և ՆԳՆ-ի արդյունավետ աշխատանքից էր կախված պետական մեխանիզմի զանազան օղակների արգասաբեր աշխատանքը, որին կոթնելու էին մյուս նախարարությունները և պետական այլևայլ մարմինների համակարգը: Նա բավական հանգամանալից անդրադարձել է նաև միլիցիայի և ՆԳՆ-ի կողմից հանցագործության դեմ մղված պայքարի հարցերին: Բերված են բազմաթիվ փաստեր, որոնց միջոցով պարզվում է այդ մարմինների աշխատանքի արդյունավետությունը պաշտոնական, զինվորական և այլ կարգի հանցագործությունների (կաշառակերություն, դասալքություն և այլն) դեմ մղվող պայքարում: Վ. Վիրաբյանը հանգում է անաչառ եզրահանգման, որ այդ մարմիններին, այնուամենայնիվ, չհաջողվեց հաղթահարել այն ներքին անիշխանությունը և վարչարարությունը, կաշառակերությունը և իրապես մեծ չափերի հասնող հանցավորությունը, որն այդ ժամանակաշրջանում իշխում էր միլիցիայում և ՆԳՆ-ում, և որ հենց իրենք էին երբեմն հասարակության մեջ ստեղծում անպատժելիության և մշտական տագնապի մթնոլորտ՝ տպավորություն թողնելով, որ, կարծես թե, իրոք, անհնարին է կարգ ու կանոն, օրինականություն հաստատել երկրում (էջ 90-94):

Հեղինակը անդրադառնում է ուշագրավ մի խնդրի ևս: Գրքի երրորդ գլխում պատմաբանը քննում է այնպիսի մի հարց, ինչպիսին է միլիցիայի և ՆԳՆ մարմինների դերը՝ երկրի ներքաղաքական կյանքում լարվածություն ստեղծող և պահպանող գլխավոր տարրի՝ Հայաստանի տարբեր շրջաններում, հատկապես սահմանամերձ ծայրամասերում հոծ զանգվածներով ապրող մահմեդականներին հնազանդեցնելու գործում, ինչպես նաև վերհանելով միլիցիայի թույլ տված սխալները և սայթաքումները (էջ 98-141):

Այսպիսով, Վ. Վիրաբյանը ընթերցողի դատին է ներկայացրել գիտական տեսանկյունից նոր հիմնախնդիր, որն իր մատուցման ոճով և բարձրացրած հարցաշարով լուրջ հետաքրքրություն է ներկայացնում: Չնայած որոշ վիճահարույց առաջադրումների և բացթողումների, մենագրությունը արժեքավոր է հայ պատմա-գիտական միտքը հարստացնելու առումով:

ՀՈՎԱԿԻՄՅԱՆ Գ. Ա.
Պատմական գիտությունների թեկնածու